



Our school our diversity

your story in 60 seconds

Մեր դպրոցը, մեր բազմազանությունը՝ ձեր պատմությունը 60 վայրկյանում

Ազգային փոքրամասնությունների ԵԱՀԿ գլխավոր հանձնակատարը հայտարարում է **Վիդեո-մրցույթ**՝ դպրոցականների և երրիտասարդության շրջանում: Վիդեո-մրցույթի նպատակն է Ազգային փոքրամասնությունների գլխավոր հանձնակատարի՝ ազգային փոքրամասնությունների կրթական իրավունքների վերաբերյալ առաջին և նորարարական հանձնարարականների 20-ամյակին ընդառաջ՝ բարձրացնել իրազեկվածության մակարդակը՝ հակամարտությունների կանխարգելման գործում կրթության դերկատարման վերաբերյալ: Միացե՛ք մեզ՝ բարձրացնելու իրազեկվածության մակարդակը հակամարտությունների կանխարգելման գործում կրթության դերկատարման մասին՝ ներկայացնելով մեզ ձեր վիդեո-պատմությունը՝ ձեր դպրոցում բազմազանության մասին:

Երեք լավագույն տեսահոլովակները կպարգևատրվեն և կներկայացվեն 2016թ. ապրիլի 20-21-ին Հասագայում՝ Նիդեռլանդներում կայանալիք հոբեյանական միջոցառումների ժամանակ: Ներկայացված տեսահոլովակները նաև կտեղադրվեն Ազգային փոքրամասնությունների ԵԱՀԿ գլխավոր հանձնակատարի և առնչվող կայքէջերում:

Ո՞վ՝ Ազգային փոքրամասնությունների ԵԱՀԿ գլխավոր հանձնակատարը ԵԱՀԿ անկախ կառույց է, որը հիմնադրվել է 1992թ. և ունի մանդատ՝ ապահովելու վաղ ազդարարում և վաղ գործողություններ՝ կանխելու ազգային փոքրամասնությունների հետ կապված հնարավոր լարվածությունները, որ կարող են հրահրել հակամարտությունների բռնկումը պետությունների միջև կամ ներսում:

Ի՞նչ՝ Ձայնագրել առավելագույնը մեկ բույե տևողությամբ՝ ձեր դպրոցում բազմազանության մասին մի պատմություն ներկայացնող տեսահոլովակ: Ժամանակակից աշխարհն ավելի ու ավելի բազմալեզու ու բազմամշակույթ է դառնում: Ինչպիսի՞ն է այս աշխարհը ձեր և ձեր դասընկերների համար: Ինչպիսի՞ դեր է խաղում կրթությունը դրանում: Մշակութորեն որքա՞ն է բազմազան ձեր դպրոցը, և դուք ինչպիսի փորձ ունեք դրանում: Արդյո՞ք կրթությունը փոխակերպում է բազմազանությունը հնարավորության:

Ե՞րբ՝ 2016թ. մարտի 4-31՝ ժամը 23:59:

Մասնակցություն: 12-18 տարեկան երիտասարդներ՝ անհատապես կամ փոքր խմբերով:

Մրցանակներ՝ Ազգային փոքրամասնությունների ԵԱՀԿ գլխավոր հանձնակատարը մրցանակներ է նախատեսել երեք տեսահոլովակների համար: Առաջին մրցանակը տեսախցիկ է, երկրորդը՝ պլանշետ (tablet) և երրորդը՝ արևային մարտկոցներով ուսապարկ:

Ինչպես՝ Տեսահոլովակները կարող են ձայնագրվել ձեր բջջային հեռախոսի տեսախցիկով կամ այլ սարքավորումներով՝ նախընտրելի է նկարահանել հորիզոնական դիրքով (landscape dimension): Ֆիլմը չպետք է գերազանցի մեկ բույե տևողությունը:

Լեզու` Լեզվական սահմանափակումներ չկան: Տեսահոլովակները կարող են ձայնագրվել ցանկացած լեզվով (լեզուներով), բայց պետք է հասկանալի լինեն դիտողների համար, ովքեր չեն խոսում տեսահոլովակի մեջ օգտագործված լեզվով: Առավել ընդունելի են տեսահոլովակները, որոնք ներառում են ստեղծագործական վիզուալ (տեսողական) հաղորդակցության լեզու, երաժշտություն, ձայներ և այլ լավ գաղափարները ողջունելի են:

Դիմելու կարգը` Ներկայացրեք ձեր` առավելագույնը մեկ բուպե տևողությամբ տեսահոլովակները հետևյալ կերպ.

- ❖ Ուղարկեք հետևյալ էլ. փոստին` videocontest@osce.org (**Զգուշացում.** մի` կցեք տեսահոլովակը էլ. փոստին, այլ ուղարկեք հղումը (link), որտեղ տեսահոլովակը ներբեռնված է` **Dropbox, WeTransfer, MEGA or TransferBigFiles** կայքերում):
- ❖ **Whatsapp-ով`** Մեր դպրոցը, մեր բազմազանությունը` +31641644344 հեռախոսահամարով
- ❖ **Viber App`** Մեր դպրոցը, մեր բազմազանությունը` +31641644344 հեռախոսահամարով
- ❖ **Line App`** Մեր դպրոցը, մեր բազմազանությունը` +31641644344 հեռախոսահամարով

Խնդրում ենք տեսահոլովակը ներկայացնելիս` ներառել նաև հետևյալ տեղեկատվությունը

- ❖ Ձեր ամբողջական անունը (անունները)
- ❖ Ծննդյան ամսաթիվ (ամսաթվեր)
- ❖ Էլ. փոստի հասցե
- ❖ Բջջային հեռախոսահամար
- ❖ Անձնական նկար կամ խմբային նկար
- ❖ Երկիր, քաղաք և դպրոցի անվանումը

Խնդրում ենք պահպանել վիդեոյի բնօրինակը ձեր հեռախոսի կամ տեսախցիկի վրա: Եթե ձեր տեսահոլովակը ընտրվի` ցուցադրելու հոբեյանական միջոցառմանը, մենք ձեզ հետ կկապվենք և կկազմակերպենք բնօրինակի փոխանակումը:

Պայմաններ` Բոլոր մասնակիցները համաձայնում են հետևել և բոլոր նյութերը պետք է համապատասխանեն այս մրցույթի պայմաններին և կանոններին, որոնց կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով` www.osce.org/hcnm/225526 կայքէջում:

Ծանուցում՝ Ժյուրին կոչվող քաղաքացիները ներկայացված տեսախոլովակները և կտեղեկացնի հաղթող դիմորդներին էլ.փոստով մինչև 15 ապրիլի, 2016 թ.:

Կայք՝ www.osce.org/our-school-our-diversity

Հաագայի հանձնարարականները Ազգային փոքրամասնությունների կրթական իրավունքների վերաբերյալ խթանում են ազգային փոքրամասնությունների կրթական իրավունքների պաշտպանումը, ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար կրթության հավասար հնարավորությունները, և կրթություն՝ որպես հասարակության մեջ ինտեգրման գործիք:

«Կրթությունն անհրաժեշտ է ոչ միայն խիստ ակադեմիական և տեխնիկական պատրաստվածություն ապահովելու համար, այլ նաև պետք է սերմանի այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ հանդուրժողականությունը, բազմակարծությունը, հակառասիզմը և միջազգային ու միջհամայնքային ներդաշնակությունը»: (Ազգային փոքրամասնությունների գլխավոր հանձնակատար. Հաագայի հանձնարարականներ):